

ԲԱՐԵԿԱՄ

Սրտի ցաւերը կը սաստկանան, երբ մէկու մը վշտին վրայ ուրիշներ կ'ուրախանան: Ցաւերը կը թեթեւանան, եթէ վշտացած անձի մը ուրիշները կը կարեկցին: Ուստի, ով որ իր սրտին մէջ ցաւ ունի, թող թշնամիէն թաքուն պահէ, որպէսզի վերջինս չուրախանայ եւ ինքը աւելի տրտմի եւ թող յայտնէ բարեկամին՝ որպէսզի անոր վշտակցութեամբ ցաւերը թեթեւանան ու մը խիթարուի:

Ճշմարիտ բարեկամ են անոնք, որոնք փոխ առ փոխ կը վերցնեն իրար ծանրութիւնն ու ցաւերը: Կան նաեւ այնպիսիներ, որոնք իրենց ընկերներուն խօսքով բարեկամ եւ սիրելի կը կոչուին, բայց իրենց սրտերուն մէջ զանոնք կը համարեն բեռնակիր զրաստներ, որովհետեւ իրենց բեռները անոնց ուսերուն միշտ կը բեռցնեն, իսկ իրենք՝ անոնց բեռներուն երբեք չեն մօտենար: Ասոնք կեղծաւոր ու սուտ բարեկամներ են:

Պէտք է բարեկամ ճանչնալ ու անոր հանդէպ սէրը ամուր պահել այն անձին՝ որ կը յայտնէ քու սխալներդ առանց որեւէ շահասիրութեան: Եթէ նոյնիսկ խօսքերը խիստ ըլլան ու քու կամքիդ հակառակ, հաճիր ընդունիլ, որովհետեւ քու օգտիդ համար են: Յիմար է ան, որ իր բարեկամը կ'ատէ անոր կողմէ յանդիմանուելու պատճառով:

Շարունակելի

**ՍԻՐՏԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ
ՄԱՐԴՈՒՆ ԿԸ ՎԵՐԱԲԵՐԻՆ, ԲԱՅՑ
ԼԵԶՈՒԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ
ՏԻՐՈՋՄԷՆ Է
(Առակագ 16. 1):**

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԴԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝
ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՆԵՆ


ՈՂԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Այս բոլորէն ետք, ի՞նչ եզրակացութեան կրնանք յանգիլ: Առաջին՝ յստակ կը դառնայ, թէ որքան տարածուած է այդ մեղքը: Երկրորդ՝ աշխարհի ամէն կողմերը կը զբաղին այդ բանով: Երրորդ՝ թէ հարուստները եւ թէ աղքատները կը հրապուրւին այդ գործով: Միշտ ալ կը շահագործուի «Հայր մերը» կամ Սուրբ Երրորդութեան անունը: Միաժամանակ՝ կախարդութեամբ զբաղողները եւ անոնց դիմողները կ'ըսեն. «Ասոր մէջ գէշ բան մը չկայ. մենք Աստուծոյ անունը կու տանք»: Եւ սակայն, ատիկա աղօթք չէ: «Հայր մեր» սուրբ աղօթքը այս պարագային կ'օգտագործուի իբրեւ կախարդութեան խօսք: Աստուծոյ անունին տակ կը քողարկուի կախարդութեան մեղքը: Հմայողներու տարօրինակ արարքները կ'ապացուցանեն, թէ բարի եւ աստուածային բան մը չկայ անոր մէջ: Կը ստիպեն գորտնուկներու թիւին համաձայն օղակներ ընել թելով: Յետոյ զայն կը նետեն փողոցին մէջ, որպէսզի սուգի թափօրը անցնի վրայէն, կամ գերեզմանի մը մէջ կը նետեն, կամ կը թաղեն սեմին մօտ: Արդեօք անիկա կրնա՞յ Աստուծոյ ըլլալ: Երբեք: Ուշագրաւ է նաեւ այն խիստ գաղտնապահութիւնը, որ անոնք կ'ուսնան հմայողի դիմելէ ետք: Հմայութիւնը կը կատարուի նորալուսինի ժամանակ: Այս բոլորը պարզ ու յստակ ցոյց կու տայ, որ գործ ունինք ո՛չ թէ Աստուծոյ այլ մուկ ուժերու հետ: ...

Շարունակելի

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -
Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԵՈՒ ԽՕՍԵԳ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՌԱԳ Է ՈՒ ԽՕ ՇԱԽԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս. 119.105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 1 ԱՊՐԻԼ, 2012

ԹԻՒ 14

**ՅԻՍՈՒՍ ԵՐԻՍՏՈՍԻ
ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ
20.29- -21.17**

ԾԱՂԱԶԱՐԴ

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիփովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրենց: Համբոյ եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Պողոթէ՛ մեզի, Յիսու՛ս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Պողոթէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէ՞ք որ ընեմ՞ ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գթաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփագէ՝ Ձիթենեաց լեռան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը զրկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէ՛ք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած է՛ մը պիտի գտնէ՛ք իր աւանակին հետ. քակեցէ՛ք եւ ինծի բերէ՛ք: Եթէ մէկը առարկէ, ըսէ՛ք. "Տէրը անոնց պէտք ունի", եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականացայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէ՛ք. Ահա է՛մ թագաւորդ քեզի կու գայ. Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»:

Աշակերտները գացին եւ կատարեցին ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին է՛ն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին նստուի վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին նստուի վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ ֆաղաֆը դրդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին ֆաղաֆի բնակիչները. եւ ամբողջը կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի նագարէթ ֆաղաֆէն»:

Ապա Յիսուս տանար մտաւ եւ դուրս վոնտեց բոլոր անոնք որոնք տանարին մէջ առուծախ կ'ընէին. լումայափոխներուն սեղանները եւ աղանեկաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. "Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի", մի՞նչ դու՞ք զայն աւագակներու որջի վերածած է՛ք»: Տանարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ ֆահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տանարին մէջ կը գոչէին. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն անոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞՞ կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ "Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր"»:

Ապա Յիսուս ձգեց զանոնք եւ ֆաղաֆէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

Ծ Ա Ղ Կ Ա Ձ Ա Ր Գ



Մեծ պահոց վերջին կիրակին կը կոչուի Ծաղկազարդ:

Ծաղկազարդը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Երուսաղէմ:

Երբ Յիսուս աւանակին վրայ նստած մուտք կը գործէ Երուսաղէմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր, ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերով կը դիմաւորէ զինք: Անոնք նոյնիսկ իրենց հագուստները կը փռեն գետին, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի:

Երբ Յիսուս տաճար կը մտնէ, կը տեսնէ որ շուկայի վերածուած է ան, անմիջապէս կը մաքրէ տաճարը ու բոլորին կը հասկցնէ, որ տաճարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկազարդի Ծաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկազարդի օրը Անդաստանի ժամանակ կ'օրհնուին ձիթենիի ճիւղերը եւ հաւատացեալները օրհնուած ձիթենիի ոստերը կը տանին տուն:

Յատկանշական է Ծաղկազարդի թափօրը, որուն կը մասնակցին բոլոր մանուկներն ու երեխաները զարդարուն ու գունաւոր մոմերով:

ԱՌԱՎԱՅ

Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկուր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ինչ կը պատահի քեզի:

ՀԱՐՑՈՒՄ-ՊԱՏԱՍԽԱՆ

Ի՞նչ է թափօրը:

Ս. Պատարագի սկիզբը, պատարագիչ եկեղեցականը խորան բարձրանալէ ետք վարագոյրը կը գոցուի. վարագոյրին ետին կը պատրաստէ Ս. Պատարագի սկիզբը՝ նշխարն ու գինին: Վարագոյրը բացուելով՝ պատարագիչը խորանէն վար կ'իջնէ խաչ ու բուրվառ ձեռքին եւ դպիրներ՝ խումբով առջեւէն շարական երգելով ժողովուրդին մէջ կը դառնան: Այս կը կոչուի թափօր:

Թափօրը կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը եւ ժողովուրդին մէջ շրջիլն ու քարոզելը:

Երբ պատարագիչը թափօր կը դառնայ, հաւատացեալները պարզ դիտողներ պէտք չէ մնան: Այսօր ընդհանրացած երեւոյթ դարձած է թափօրի ատեն տեսնել հաւատացեալները, որոնք անտարբերութեամբ կը հետեւին եկեղեցւոյ մէջ դարձող պատարագիչին, բարեպաշտական մղումէ մեկնած կը մօտենան անոր ձեռքի խաչը համբուրելու, ոմանք քաղաքավարութիւն կը զգան խաչը համբուրել, ուրիշներ պատարագիչին հաճելի թուելու համար կը համբուրեն, ուրիշներ կը զգան թէ պարտաւոր են համբուրելու, եւ ինչքան զգալի կ'ըլլայ խաչը համբուրելու մեքենական շարժումները: Իսկ անոնք որոնք պատարագիչէն հեռու են, ի՞նչ կ'ընեն: Անոնք ըսելիք չունին:

Պատարագիչը երբ ժողովուրդին մէջ թափօր կը դառնայ, հաւատացեալները պէտք է մեղմ ձայնով ըսեն «Յիշեսցի՛ր եւ զմեզ առաջի անմահ գառնին Աստուծոյ», այսինքն՝ «Մեզ ալ յիշէ Աստուծոյ գառնին (Քրիստոսի) առջեւ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է կուսակրօնութիւնը:

Կուսակրօն կ'ըսուին այն քահանաները, որոնք չեն ամուսնանար, վանք կը բնակին եւ կը կոչուին արեղայ: Հետեւաբար, կուսակրօնութիւնը կը նշանակէ կոյս մնալու կամ չամուսնանալու սովորութիւն:

Փոքր աստիճան ունեցողներ կրնան ամուսնանալ մինչեւ քահանայութիւն, իսկ անոնք որ վանական կեանքի նուիրուած են, չեն ամուսնանար:

Ի՞նչն է համար չեն ամուսնանալ կուսակրօն եկեղեցականները:

Որպէսզի ազատ ըլլան աշխարհիկ հոգերէ եւ իրենց բոլոր ժամանակը եւ իրենց բոլոր ոյժը եւ ուշադրութիւնը նուիրեն իրենց հոգեւոր գործին:

Չէ՞ որ ամուսնացած առաքեալներ կային, չէ՞ որ մեր եկեղեցւոյ մէջ ալ Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ Մեծն Սահակ ամուսնացեալ էին, նոյն իսկ կաթողիկոսներ:

Այո՛, բայց նոյն ատեն կային նաեւ ամուրի առաքեալներ, չամուսնացած եկեղեցականներ: Լուսաւորիչ եւ իր որդին Վրթանէս ամուսնացած էին, բայց կուսակրօն էր անոր Արիստակէս որդին, որ յաջորդեց իրեն:

Բայց յետոյ հետզհետէ խափանուեցաւ ամուսնանալու սովորութիւնը՝ քահանայութեան վեր աստիճանաւորներու մէջ:

Կուսակրօնութեան օրինակ եւ տիպար ընդունուած է նոյն ինքն Տէր Յիսուս Քրիստոս:

Պօղոս Առաքեալ թէ՛ եկեղեցականները եւ թէ՛ աշխարհականները ազատ կը թողու իրենց կենցաղին ընտրութեան մէջ:

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԽՐԱՏ ՈՒՂԻՂ ՀՄԻՄՏՔԻ ՀՄԱՄՐ

Տէրունական խրատին հետեւելով, որ պարգեւաւեր եւ բազմաաւար բարութեան համաձայն բոլորին կու տայ եւ ո՛չ ոք կը գրկէ, ինչպէս որ ըսաւ՝ «Խնդրողը պիտի ստանայ, փնտոողը պիտի գտնէ» (Մտ. 7.8), որ մաքի իմանալին իբրեւ գիտութեան հաց եւ իմաստութեան գինի գեղեցկապէս մատակարարեց անոր քաղցը ունեցող բանական անձերուն քարոզիչներու բարձրաձայն հրաւերով հոգեւոր խրատնաճի կոչեց՝ առակողին համաձայն, մեզի ալ նոյնը իբրեւ օրէնք տուաւ ըսելով՝ «Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՛ տո՛ւր» (Մտ. 5.42):

Եթէ լաւ է կարօտեալներուն պէտքերը հոգալ, որուն փոխարէն խոստացաւ աշխարհի սկիզբէն պատրաստուած արքայութիւնը տալ, որչափ աւելի գովելի է լիացնել բարիքներէ աղօթող հոգիները: Այնքան աւելի, որքան մախապատիւ, մեծ եւ պատուական է հոգին՝ քան մարմինը, պատկեր ըլլալով աստուածայինին, մինչ մարմինը երկրորդական եւ հողանիւթ է, գոր Տէրն ալ գործով յայտնեց. որովհետեւ գրուած է՝ թէ Իրեն հետեւող ժողովուրդը միայն երկու անգամ հացով կերակրեց, բայց կենարար խօսքին վարդապետութեամբ, որ հոգիներու կերակուրն է, համաձայն այն խօսքին՝ «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքով» (Բ. օր 8.3) միշտ անոնց հոգիները կը կերակրէր: Նաեւ, իմաստուն ծառային առակով պատուիրեց միշտ ժամանակին տալ ծառայակիցներուն կերակուրը. եւ դեռ կրկնապատիկ քանակութեամբ շահողին եւ զլացողին օրինակով նոյնը ցոյց տուաւ՝ թէ պէտք է տալ ամէն անոր, որ կը խնդրէ (Մտ. 24.45-51, 2):

ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
9.9-17

Մեծապէս ուրախացիր, Սիոնի բնակիչ, ցնծութեամբ աղաղակէ՛, բնակիչ Երուսաղէմի. ահա թագաւորդ քեզի կու գայ արդարութիւն եւ փրկութիւն բերելու. որպէս հեզուլթեան նշան՝ նստած իշու վրայ, դեռ մատղաշ աւանակի վրայ:

Անիկա Եփրեմի երկրէն պիտի անհետացնէ պատերազմի կառքերը, Երուսաղէմէն պիտի վերացնէ պատերազմի ձիերը. պատերազմի աղեղը պիտի խորտակէ եւ խաղաղութիւն պիտի յայտարարէ ժողովուրդներուն: Անիկա իր իշխանութիւնը պիտի տարածէ ծովէ ծով, Եփրատ գետէն սկսեալ մինչեւ ծայրերն աշխարհի:

Գալով քեզի, Տէրը այսպէս կ'ըսէ. «Քանի արիւնով ուխտ կ'ընես հետդ, գերեվարուած քու եղբայրներդ պիտի ազատեմ անջրդի անապատին խորերէն:

Երուսաղէմ վերադարձէ՛ք, ո՛վ գերիներ, որ յոյսով կը սպասէք, ահա կը յայտարարեմ թէ՛ ձեր աքսորի ժամանակաւոր գրկանքներուն փոխարէն կրկնապատիկ բարիքներով պիտի հատուցանեմ ձեզի:

Ինծի համար Յուդան պիտի լարեմ աղեղի պէս, իսկ Եփրեմը՝ նետի պէս. գաւակներդ հեթանոսներուն դէմ պիտի հանեմ, ո՛վ Սիոն, եւ քեզ ձեռքիս մէջ պիտի բռնեմ պատերազմիկ զինւորի պողպատեայ սուրին նման»:

Այո՛, Տէրը ինք վերակացու պիտի ըլլայ անոնց վրայ. անոր նետը փայլակի պէս պիտի հարուածէ: Տէրը, Ամենակալ Աստուածը փող պիտի հնչեցընէ եւ թշնամիներուն դէմ պիտի քայէ՛ մրրիկի պէս սպառնալից:

Շարունակել ընթերցել
Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ
4.4-7

Միշտ ուրախ եղէ՛ք Աստուծով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէ՛ք: Բոլորին հանդէպ հեզ եւ ազնիւ եղէ՛ք: Շուտով Տէրը կու գայ: Ոեւէ բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհուսակ սրտով Աստուծմէ խնդրեցէ՛ք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը՝ որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

ՆԵՐՈՒՄ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Տէ՛ր, ընդունէ՛ մեր աղաչանքները՝ սուրբ Աստուածածնիմ եւ բոլոր սուրբերուն բարեխօսութեամբ, ինչպէս նաեւ այս օրուան յատուկ շնորհփովը: Լսէ՛ մեր խնդրանքը, Տէ՛ր, եւ ողորմէ՛ մեզի: Ներէ՛, քաւէ՛ եւ արձակէ՛ մեր մեղքերը եւ մեզ արժանի ըրէ՛ շնորհակալութեամբ փառաւորելու քեզ, Որդիիդ եւ սուրբ Հոգիիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: